

## ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՄԵՆ ԼԵՎՈՆԻ

Բանասիրական գիտ. թեկնածու,  
Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

### ՄԻՖԸ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՎԵՏԻԶ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ՌՈՏՄԻՍՏՐ Վ. ՊԱՎԼՈՎԻՉԻ ԵՐԱՉԸ» ՊԱՏՄՎԱԾՔՈՒՄ<sup>1\*</sup>

**Բանալի բառեր** - Ավետիք Իսահակյան, Փարիզ, ռուս վտարանդի-  
ներ, ռոտմիստր, կարոտախոտ, անցյալ, ներկա և ապագա, միֆ և իրա-  
կանություն, Փարիզի «ռուսական հետքը»:

Աշխարհի տարբեր ժողովուրդների գրականության մեջ քիչ չեն մե-  
ծանուն գրողները, ովքեր ստեղծագործել են գրական տարբեր սեռերով  
և իրենց տաղանդի ուժով բոլոր ասպարեզներում էլ կերտել բարձրարժեք  
գործեր, իսկական գլուխգործոցներ, որոնք կազմում են ազգային գրա-  
կանության փառքը և ներառվել են համաշխարհային գրականության  
ոսկե ֆոնդ: Բազմադարյան հայ գրականության մեջ այլոց թվում նման  
հեղինակ է նաև Ավետիք Իսահակյանը, որն առաջին հերթին, անկաս-  
կած, բանաստեղծ է, անգուգական քնարերգու, բայց միաժամանակ նա  
ստեղծագործել է նաև արձակ, և նրա արձակը՝ «ակոսված բանաստեղծի  
խոփով»<sup>2</sup>, նրա «պոեզիայի կողքին ունի իր ուրույն տեղը, որպես գրողի  
գեղարվեստական աշխարհի անտրոհելի համակարգ»<sup>3</sup>:

Իսահակյանի արձակը բազմաժանր է՝ պատմվածքներ, լեգենդներ,  
գրույցներ, արձակ պոեմներ, հեքիաթներ, առակներ, հուշեր, գրական  
դիմանկարներ, ճամփորդական նոթեր, մանրապատումներ և, վերջա-  
պես, սովորածավայ, հանրագիտարանային մի վեպ՝ «Ուստա Կարո»-ն,  
որն իր բնույթով եզակի է հայ գրականության մեջ: Հայ գրողն իր արձակ  
ստեղծագործություններում ներկայացրել է ոչ միայն ազգային կյանքն ու  
հանդես բերել յուրօրինակ լեզվամտածողությամբ աչքի ընկնող հերոսնե-  
րի, այլև, որպես անձամբ իր հետ կատարված դեպքերի, հանդիպումնե-  
րի, այլևայլ իրադարձությունների կամ իր գրական ու փիլիսոփայական  
հետաքրքրությունների անմիջական արձագանք, անդրադարձել է տար-  
բեր ժողովուրդների կյանքին՝ հանդես բերելով օտարազգի հերոսների

1 \* Ընդունվել է տպագրության 08.06. 2022 թ.

2 Ավիկ Իսահակյան, Ավետիք Իսահակյանի արձակը, Երևան, 1975, էջ 4:

3 Ավիկ Իսահակյան, Ավետիք Իսահակյանի արձակը, Երևան, 1975, էջ 4:

մի ողջ պատկերասրահ: Ասվածը, մասնավորապես, վերաբերում է Իսահակյանի պատմվածքներին. նրա հերոսը մարդկային վեհ նկարագիր ունեցող մի հայ Օհան ամի է («Համբերանքի չիբուխը»), ազատատենչ ու ըմբոստ մի վրացի («Շաքրո Վալիշվիլի»), իտալացի հայրենասեր տարագիր մի կոշկակար՝ Գարիբալդիի նախկին զինվոր Ջիովաննին («Գարիբալդիականը»), սարերի կարոտից ինքնասպան եղած մի քուրդ բանտարկյալ («Քուրդ Ամոն»), արվեստի նկատմամբ սերն ու անմարդկային դաժանությունն իր մեջ մեկտեղող մի թուրք սուլթան («Ֆաթիի սուլթան Մեհմեդ»), հոր արյան վրեժն առնող դաժան, բայց արդար մի վիկինգ Բոդդլի («Վիկինգների կյանքից») ... Շարքը կարելի է երկար շարունակել: Հերոսների այդ յուրօրինակ ու գունագեղ պատկերասրահում իր ուրույն տեղն ունի ռուս վտարանդի սպան՝ «Ռոտմիստոր Վ. Պավլովիչի երազը» պատմվածքի գլխավոր հերոսը<sup>1</sup>:

Իսահակյանը, ինչպես վկայում է նրա որդին, ռուս վտարանդիների հետ, թեև ոչ մոտիկից, առնչվել է դեռ 1917 թ. ժնկում, ուր Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ և հատկապես նրանից հետո ապաստան էին գտել բազմաթիվ ռուսներ՝ քաղաքական գործիչներ, մտավորականներ, գրողներ, մշակույթի գործիչներ, այդ թվում՝ կոմպոզիտորներ Իգոր Ստրավինսկին և Սերգեյ Ռախմանինովը, բեմադրիչ Սերգեյ Դյագիլևը, պարուհի Աննա Պավլովան<sup>2</sup>: Այնուհետև Վարպետը ռուս վտարանդիներ-

1 Մինչև վերջին ժամանակներս, այն է՝ մինչև ՍՍՀՄ-ի փլուզումը 1991 թ., ռուս վտարանդիության թեման հայրենիքում ուսումնասիրության համար գրեթե անտեսված, նույնիսկ փակ թեմա էր, և միայն վերջին երեք տասնամյակում է այն արժանացել հավոր պատշաճի ուշադրության ու ենթարկվել բազմակողմանի քննության: Արդյունքում տպագրվել են նախկինում գրված բազմաթիվ գեղարվեստական գրքեր, հուշեր, գրվել են հարյուրավոր ուսումնասիրություններ, դասագրքեր և հոդվածներ, որոնցում մանրամասն ներկայացված է ռուս վտարանդիության հատկապես առաջին շրջանի (1917-1939) պատմությունը, արժևորված է մանավանդ Եվրոպա (Ֆրանսիա) տարագրված վտարանդիների դերը ռուս ինքնության, ազգային մտածողության, լեզվի, պատմական հիշողության, ուղղափառ հավատի պահպանման, մշակույթի և գրականության զարգացման գործում, ինչպես նաև բացահայտված է ռուս վտարանդիների հսկայական ազդեցությունը եվրոպական (ֆրանսիական) մշակույթի, գրականության և քնդիմարապես կենցաղավարության վրա: Նշենք այդ գրքերից մի քանիսը՝ Менегальдо Е., Русские в Париже. 1919-1939, Москва, 2001 (առաջին հրատ.՝ Փարիզ, 1998, ֆրանսերեն), Парчевский К. К., По русским углам, М., 2002, Носик Б., Привет эмигранта, свободный Париж, М., 1992, Русские без Отечества, М., 2000, Ипполитов С. С., Российская эмиграция в Европе: несостоявшийся альянс, М., 2004, Берберова Н., Курсив мой, М., 1999 (գրվել է 1966-ին, առաջին հրատ.՝ Նյու Յորք, 1969, անգլերեն), Яновский В., Поля Елисейские. Книга памяти, СПб., 1993 (առաջին հրատ.՝ Նյու Յորք, 1983), Сабенникова И. В., Российская эмиграция (1917-1939), Тверь, 2002 և այլն:

2 Վիգեն Իսահակյան, Հայրս, Երևան, 2000, էջ 64-65:

րի հետ հանդիպել է արդեն Վենետիկում. 1924 թ. նա ծանոթացել է Դյագիլևի և դերասանուհի Իդա Պավլովայի՝ պարուհի Աննա Պավլովայի քրոջ հետ<sup>1</sup>: Բայց Իսահակյանի իսկական ծանոթությունն ու մտերմությունը ռուս վտարանդիների հետ սկսվել է 1930 թ. Փարիզում, որն այդ տարիներին դարձել էր ռուս տարագիրների եվրոպական ամենախոշոր հավաքատեղին, քաղաքական և մշակութային կենտրոնը: Քաղաքացիական պատերազմում Սպիտակ գվարդիայի կրած պարտությունից հետո՝ 1920 թ. և դրան հաջորդած մի քանի տարիների ընթացքում Ֆրանսիա արտագաղթած հարյուրհազարավոր ռուս վտարանդիների<sup>2</sup> մի ստվար զանգված հաստատվել էր Փարիզում ու նրա շրջակայքում՝ ռուսական շունչ ու ոգի հաղորդելով իսկա քաղաքին, և դա առավելապես գրողների և արվեստագետների, ռուսական մշակույթի, նորածնության տների, ռուսական ռեստորանների ու ճաշարանների, նաև՝ մի քանի հազարի հասնող ռուս տաքսիստների շնորհիվ<sup>3</sup>: 1930-1936 թթ. ապրելով Փարիզում Իսահակյանն անշուշտ չէր կարող անհաղորդ մնալ քաղաքի այս «ռուսակալացմանը»: Եթե Ալեքսանդր Կերենսկու հետ նրա հանդիպումը դարձյալ եպիգոդիկ բնույթ էր կրում<sup>4</sup>, ապա նրա հանդիպումները ռուս տարագիր գրողների և մշակույթի գործիչների հետ մշտական էին, և շատերի հետ նա ընկերական-մտերմական հարաբերությունների մեջ էր: Այդ տարիներին Փարիզում էին ապրում Իվան Բոնինը, Ալեքսեյ Տոլստոյը, Ալեքսեյ Ռեմիզովը, Մարինա Տվետաևան, Կոնստանտին Բալմոնտը, Ալեքսանդր Կուպրինը, Դմիտրի Մերեժկովսկին, Չինաիդա Գիպիուսը և ուրիշներ: Իսահակյանը, ինչպես հավաստում է բանաստեղծի թոռը՝ գրականագետ, Վարպետի կենսագրության, ստեղծագործության և ընդհանրապես գրական ժառանգության լավագույն գիտակ Ավիկ Իսահակյանը, «համարյա բոլորին անձամբ ճանաչում էր և հաճախ հանդիպում էր նրանց Փարիզի Վալդր Գրաս փողոցի ռուսական գրադարանում, այսպես կոչված

1 Նույնը, էջ 141 (Դյագիլևի հետ նրան ծանոթացրել է Մարտիրոս Սարյանը, որն այդ ժամանակ մասնակցում էր Վենետիկի 14-րդ միջազգային բիենալեին) և 212:

2 Դրանք ազնվականներ էին ու զինվորականներ, քաղաքական գործիչներ և գործարարներ, հայտնի իրավաբաններ ու դեռ չճանաչված գիտնականներ, ռուսական Արծաթե դարի սերունդը և մշակութային գործիչներ, բժիշկներ և հոգևորականներ, պետական ծառայողներ և կազակներ, նաև՝ հասարակ մարդիկ, շատերը՝ ընտանիքներով, և այս բոլորին միավորում էր ատելությունը բուլճարիկների և անափ կարոտը՝ հայրենիքի նկատմամբ:

3 Менегальдо Е., Русские в Париже. 1919-1939, стр. 173-194.

4 Վիգեն Իսահակյան, Հայրս, էջ 373-375: Դա նրանց առաջին հանդիպումը չէր. ռեմ 1910 թ. Կերենսկին, երբ նահանգային դատապաշտպան էր Թիֆլիսում և մասնակցում էր այսպես կոչված «Դաշնակցության գործին», նա խորհուրդ էր տվել գործով անցնող Իսահակյանին փախչել Ռուսական կայսրությունից, և հաջորդ տարի՝ 1911-ին, բանաստեղծը ի կատար էր ածել այդ խորհուրդը:

«Էմիգրանտ ռուս գրողների ասոցիացիայում» և, իհարկե, Մոսկառնասի հայտնի «Կլոգերի դե Լիլա» սրճարանում, ուր ավանդական մի բաժակ սուրճի շուրջը ժամերով վեճի ու զրույցի էին բռնվում»<sup>1</sup>։ Մարինա Ցվետա-ևայի դուստրը՝ Արիադնա Էֆրոնն իր հուշերում շատ հետաքրքիր տեղեկություններ է հաղորդել ռուս բանաստեղծուհու և Իսահակյանի հանդիպումների ու նրանց հարաբերությունների, ինչպես նաև Իսահակյանի և այլ անվանի ռուս վտարանդիների, մասնավորապես՝ Կ. Բալմոնտի հետ հանդիպումների մասին<sup>2</sup>։ Դարձյալ ըստ Ավիկ Իսահակյանի՝ «Բանաստեղծի գրադարանում պահպանվում են բազմաթիվ գրքեր՝ Իսահակյանին արված հեղինակային մակագրություններով՝ փարիզյան շրջանի նրա ծանոթ ռուս գրողներից»<sup>3</sup>։ Ավելացնենք նաև, որ Իսահակյանը երկու անգամ 1920-ական թթ. կեսերին Վենետիկում և 1930-ական թթ. սկզբներին Փարիզում առաջարկ է ստացել փարիզաբնակ հայ մեծահարուստ գործարար Աբրահամ-Բոգդան Ղուկասովից (Աբրահամ Ղուկասյանց)՝ աշխատակցելու Փարիզի ռուս վտարանդիների գլխավոր օրգանին՝ «Վոգրոժդենիե» («Վերածնունդ») օրաթերթին (1925-1940), որի հետ համագործակցում էին տարագիր ռուս գրողներից շատերը։ Ղուկասյանցը թերթի հիմնադիր-հրատարակիչն էր, և այն լույս էր տեսնում նրա մեկենասությամբ նրան իսկ պատկանող հրատարակչական հաստատությունում։ Թեև այդ առաջարկը Իսահակյանի համար համեմատաբար ապահով ապրելու հեռանկար էր խոստանում, այնուամենայնիվ Վարպետը չի ընդունել այն, քանի որ բացահայտ հակաբոլշևիկյան, հակասովետական ուղղություն դավանող օրգանին աշխատակցելը Իսահակյանի համար կփակեր հայրենիք վերադառնալու բոլոր դռները<sup>4</sup>։

Ինչ խոսք, բանաստեղծը ռուս վտարանդիների կյանքին և հատկապես «Ռուսական Փարիզին» ծանոթ էր ոչ միայն գրողների ու արվեստագետների հետ հանդիպումներից կամ «Վոգրոժդենիե» ու ռուսական տասնյակ այլ պարբերականների տպագրած նյութերից. անկասկած նա հանդիպել է նաև ամենատարբեր աշխատանքով իրենց հասապագորյա հացը վաստակող բազմաթիվ «հասարակ» ռուս տարագիրների, այդ թվում՝ Նախկին զինվորականների, շփվել նրանց հետ, դիտել և ուսումնասիրել նրանց առօրյա կյանքն ու կենցաղը, ինչն էլ հնարավորություն է

1 Ավիկ Իսահակյան, Ավետիք Իսահակյանը և ռուս գրականությունը, Երևան, 1984, էջ 116:

2 Литературные связи, т. 2, Русско-армянские литературные связи: исследование и материалы, издание ЕГУ, Ереван, 1977, стр. 238-245. Տե՛ս նաև վերը նշված գիրքը, էջ 117-118:

3 Ավիկ Իսահակյան, Ավետիք Իսահակյանը և ռուս գրականությունը, էջ 119:

4 Վիգեն Իսահակյան, Հայրս, էջ 128-129 և 353-355:

տվել խորաթափանց հեղինակին ծանոթանալու նրանց տրամադրություններին, խոհերին, ապրումներին ու զգացումներին, ամփոփելու այդ բոլորը և 1933 թ. գրելու իր լավագույն արձակ գործերից մեկը՝ «Ռոտմիստր Վ. Պավլովիչի երազը»<sup>1</sup>:

Արտաքուստ շատ պարզ կառուցվածք ու սյուժե ունի այս պատմվածքը, բայց այդ արտաքին պարզության և թվացյալ միապաղաղության տակ թաքնված է հարյուրհազարավոր ռուս տարագիրների հոգին բզկտող ողբերգությունը՝ ծնված կորցրած հայրենիքի, հայրենի թանկ հիշատակների նկատմամբ սիրո և անցյալը վերակենդանացնելու ու այդ հայրենիք վերադառնալու անհնարինության գիտակցումից առաջացած հակասությունից: Պատմվածքի գլխավոր հերոսը՝ ազնվական, Կուլյակի բանակի նախկին ռոտմիստր Վլադիմիր Պավլովիչը, այցելում է իր հին ծանոթի՝ մոսկովյան նախկին ռեստորանատեր Կուզմա Մաթֆեյիչի փարիզյան ճաշարան՝ իր հոգու վիշտը քամուն տալու: Գործողությունը զարգանում է նրանց երկխոսության միջոցով<sup>2</sup>, և Իսահակյանը վարպետորեն քայլ առ քայլ բացում է ռոտմիստրի հոգու ծալքերը, լուսավորում այդ «հանելուկային ռուսական հոգու» ամենամթին խորշերը՝ դրանով իսկ բացահայտելով ռուս վտարանդիության ողբերգությունը: Վլադիմիր Պավլովիչի երկար մենախոսություններում միահյուսված են անցյալը, ներկան և ապագան, մի՞նչ ու իրականությունը, և այս երկուսը ժամանակային երեք կտրվածքներում էլ էական դեր են կատարում, վերափոխվում են մեկը մյուսի կամ զուգադրվում են իրար՝ դրանով իսկ օգնելով հեղինակին ամբողջացնելու ասելիքը:

Ռուս ազնվական փայլուն սպան, սպանների զարդը, ինչպես ինքն է բնութագրում իրեն, Յուդենիչի, Վրանգելի և Կուլյակի ջախջախված բանակների հազարավոր այլ սպանների նման մի կերպ փախել է հայրենիքից, հաստատվել Փարիզում, բայց «աշխարհի մայրաքաղաքը» և ընդհանրապես Եվրոպան, պարզվում է, նրա սրտով չեն, նա մեծ վիշտ է ապրում, և դրա առաջին պատճառը իր (և շատ ռուս վտարանդիների) թանկ կորուստներն են՝ միապետությունը, հին, նվիրական Ռուսիան՝ իր ազնվականներով ու մոլոժիկով, հազարազմբեթ Մոսկվան ու Մայր Վոլգան, ռուսական անծայրածիր անտառներն ու լայնարձակ դաշտերը, մի

1 Այս առումով, անշուշտ, ճիշտ է այն դիտարկումը, թե այդ պատմվածքը «արդյունք էր ռուսական հեղափոխության, ռուս էմիգրանտների ճակատագրի վերաբերյալ Իսահակյանի երկար տարիների խորհրդածությունների» (Ավիկ Իսահակյան, Ավետիք Իսահակյանը և ռուս գրականությունը, էջ 120):

2 Ըստ էության, դա ավելի շատ մենախոսություն է, քանի որ հիմնականում խոսում է ռոտմիստրը, իսկ Կուզմա Մաթֆեյիչը համաձայնում է նրա հետ, կարճ հարցեր տալիս կամ համառոտ արտահայտում իր կարծիքը՝ միախառնելով հոգեկան տազնապ ապրող իր հայրենակցին և վաղեմի ծանոթին:

խոսքով՝ նա հայրենիք է կորցրել ու այդ հայրենիքում ապրած մի կյանք, որն անցել, գնացել է անդարձ ու դարձել միֆ... Սուրբ Ռուսիայում թագավորի փոխարեն հիմա իշխում է «մի խեղճ, կատրժնիկ գլուխ», և բոլշևիկները «ջնջում են մեր հնադարյան, նվիրական կարգերը և հրեական սոցիալիզմ են դնում տեղը:

Այլևս այնտեղ հին Ռուսը չկա – հավատարիմ, ավանդապահ, հայրենասեր:

Այլասերել են մեր ժողովրդին: Չկա ազգային կյանք, ընտանիք:

Մուժիկը – փչացրել են մուժիկին: Մուժիկը չկա»<sup>1</sup>:

Իսահակյանի պատմվածքում արտացոլվել է նվիրական, արդեն միֆ դարձած անցյալի վերաբերյալ մեկ իրողություն ևս. եթե տարագրության առաջին տարիներին ռուս վտարանդիները իրենց սրտի խորքում փափայում էին այն հույսը, թե բոլշևիկների իշխանությունն ուր որ է կընկնի, և իրենք կվերադառնան հայրենիք, ապա տարիների հետ այդ հույսը աստիճանաբար մարեց և վերածվեց միֆի՝ տեղի տալով այն դառը գիտակցությանը, որ դա անհնար է<sup>2</sup>: «- Միամիտ երեխաներ,- ասում է պորուչիկը Կուզմա Մաթֆեյիչին,- թե՛ նրանք, թե՛ դու և ուրիշ հազարավոր ռուսներ, որ հավատում եք և ասում շուտով տուն կդառնանք, բոլշևիկները շուտով կընկնին, վաղը, մյուս օրը... մեր ճերմակները, մեր սպաները, մեր մուժիկը... Իսկ ես ասում եմ մենք այլևս Մայր Ռուսիայի երեսը չենք տեսնելու: Վերջացած է: Ռուսիայի տերը բոլշևիկներն են»<sup>3</sup>: Իրականության այս սթափ գնահատականը ստիպում է ռուս տարագիրներին այլ միջոցներ փնտրել՝ կորցրած անցյալին շփվելու, պատմական հիշողությունը, ուղղափառ հավատն ու ազգային մշակույթը պահպանելու և իրենց հայրենիքում զգալու պատրանք ստեղծելու համար. նրանք կառուցում են ուղղափառ եկեղեցիներ<sup>4</sup>, ստեղծում են արխիվներ, մշակութային

1 Ավ. Իսահակյան, Երկերի լիակատար ժողովածու 14 հատորով, հ. VI, Երևան, 2019, էջ 288, 292-293 (այսուհետ՝ Ավ. Իսահակյան, հ. VI և էջը): Պատմվածքն առաջին անգամ տպագրվել է նույն 1933 թ. Փարիզի «ՀՕԿ» հանդեսում (Հայ օգնության կոմիտեի օրգան), թ. 3, էջ 17-27 և հետագայում, որքան էլ զարմանալի է, տեղ չի գտել Իսահակյանի երկերի մի քանի ժողովածուներում:

2 Տե՛ս, օրինակ, Менегальдо Е., Русские в Париже. 1919-1939, стр. 34, Сотников С. А., «Русская военная эмиграция во Франции 1920-1930 гг.: проблемы адаптации», Вестник ассоциации вузов туризма и сервиса, 2007, N 2, стр. 124 և այլն:

3 Ավ. Իսահակյան, հ. VI, էջ 292:

4 Ի դեպ, Իսահակյանը կիրակի ցերեկները հաճախ էր լինում նրանցից մեկում՝ դեռ 1861 թ. օծված Սուրբ Ալեքսանդր Նևսկու տաճարում, «ուր սիրում էր ունկնդրել դեռևս մանկության օրերից իրեն լավ ծանոթ ռուսական եկեղեցական երաժշտությունը: Նույն եկեղեցու բակում նա սովորաբար հանդիպում էր իրեն ծանոթ ռուս ընկերներին, երբեմն էլ հրավիրվում ավանդական թեյասեղանի՝ ծանոթ մտավորականներից որևէ մեկի տանը» (Ավիկ Իսահակյան, Ավետիք Իսահակյանը և ռուս գրականությունը, էջ 117):

ընկերություններ, քաղաքական ակումբներ, թատրոն, կրթական հաստատություններ, հրատարակում են թերթեր ու ամսագրեր, բացում են ռուսական ճաշարաններ ու ռեստորաններ, ուր ամեն ինչ շնչում է ռուսական ոգով, ինչպես, օրինակ, Կուզմա Մաթֆեյիչի մոտ է. «Ճաշարանը սարքավորված էր ռուսական ոճով: Բոլոր իրերից ռուսություն էր բուրում թե՛ կարասիներից և թե՛ պատերը զարդարող նկարներից:

Ռուսական ահարկու անտառները:

Անձիր դաշտերում սուրացող զվարթ տրոյկաները:

Կրեմլը՝ ոսկե գմբեթներով:

Ծաղկավետ մարգերում ազգային տարազներ հագած աղջիկ-տղաների կենսուրախ պարերը:

Վոլգան՝ անափ ստեպների մեջ թավալվող»<sup>1</sup>: Պատկերն ամբողջացվում է վոդկայով, աղ դրած ձկով, թթու վարունգով, որ իրենց զրույցի ընթացքում անընդմեջ ճաշակում են հերոսները, և գրամոֆոնից Վլադիմիր Պավլովիչի պատվերով հնչող «Вниз по матушке по Волге» ժողովրդական երգով: Բայց այս պատրանքային միջավայրը (և ընդհանրապես ոչինչ) չի մեղմում ռոտմիստրի կարոտախտը, չի դարմանում նրա վիշտը, նրա սիրտը «շատ ու շատ տխուր է», որովհետև միայն անցյալի կորստից չէ, որ այն միտում է. այդ անցյալին Իսահակյանը վարպետորեն միահյուսել է ներկան՝ ռուս վտարանդիների թշվառ վիճակը «լուսավոր» Եվրոպայում: Ընդհանրապես Եվրոպացու և մասնավորապես ֆրանսիացու համար միևնույնն էր՝ ով էր ռուս վտարանդին՝ իշխա՞ն էր, թե՞ կոմսուհի, գրո՞ղ, թե՞ զինվորական, քաղաքական գործի՞չ, թե՞ գիտնական... Ռուս վտարանդիներն Եժան աշխատուժ էին, խորթ մի տարր, որին պետք էր շահագործել՝ հարստանալու համար, որի գիտելիքները պետք էր օգտագործել՝ առաջադիմելու համար, իսկ տաղանդը՝ նաև հաճույք ստանալու համար: Փոխարենը ֆրանսիան ռուս վտարանդիներին տվել էր Նանսենյան անձնագիր՝ անձը հաստատող ժամանակավոր վկայական, որը քաղաքացիություն չունեցողներին ազատ տեղաշարժվելու իրավունք էր տալիս, բայց արդեն 1927 թ. Նրանց արգելվել է ազատ տեղաշարժվել Եվրոպայում: Իսահակյանն իր պատմվածքում ակնառու կերպով ցուցադրել է, թե ինչպես է իրեն զգում ռուս մարդը, մասնավորապես ազնվական սպան այդ Եվրոպայում, ինչպես է նա գնահատում Եվրոպական իրականությունն ու արժեքները. «Դու գիտե՞ս, Կուզմա, ի՞նչ բան է փողը մասնավորապես Եվրոպայում. փողը հոտ չունի, փողը արյան բիծ չի պահում իր վրա

1 Ավ. Իսահակյան, հ. VI, էջ 287:

2 Менегальдо Е., Русские в Париже. 1919-1939, стр. 30.

Եվրոպացու համար, նա պաշտում է փողը, թեկուզ բոլշևիկների ձեռքից լինի, միևնույն է նրա համար:

Ես փողից դուրս ուրիշ սրբություն չտեսա Եվրոպայում...»<sup>1</sup>: Նա զայրալից խոսքեր է ասում հատկապես Անգլիայի՝ «այդ խարոդախ, եսամոլ, ամբարտապան ժողովրդի» հասցեին. «ԶԷ՞ որ Անգլիան մեր ժառանգական, դարերով թշնամի է. նրա գիշերվա և ցերեկվա երազն է՝ տեսնել Ռուսիան քայքայված, փոշիացած»<sup>2</sup>: Օտարությունը, ըստ Վլադիմիր Պավլովիչի, որտեղ էլ լինի, մի թշնամական ապականիչ միջավայր է, որը փչացնում, այլասերում է ռուս մարդուն, ոչնչացնում նրա բնածին ազնիվ նկարագիրը, դարձնում եսամոլ, թուլամորթ ու փողապաշտ, և հիմնականում դա տեղի է ունենում ապրուստի միջոցների պակասի պատճառով: Խմած օղուց տաքացած սպայի գնահատականները թերևս փոքր-ինչ չափազանցված են<sup>3</sup>, բայց ընդհանուր առմամբ նա ճիշտ է ընկալում իրականությունը՝ հաստատելով իր խոսքերը մի քանի կենդանի, անձամբ իր հետ պատահած օրինակներով: Նրա համար ամենից անտանելին այն է, որ այլասերվել են ռուս վտարանդի ազնվական սպաները, իր ընկերները, որոնց հետ նա «մկրտվել է կռվի կրակի մեջ». «Նրանք բոլորը հիմա սրիկաներ են դարձել, վաշխառուներ, խաբեբաներ...

Մի՞թե դրանք պիտի զոհվին հայրենիքի համար, այդ բարոյական ցնցոտիները...

Առաջ մեր սպաների նշանաբանն էր. «Հոգիդ՝ Աստծուն, կյանքդ՝ ցարին, հայրենիքին, պատիվդ՝ ոչ ոքի»<sup>4</sup>: Իսկ հիմա՝ հոգիդ՝ փողին, կյանքդ՝

1 Ավ. Իսահակյան, հ. VI, էջ 288:

2 Նույն տեղում: Ի դեպ, Եվրոպայի և մասնավորապես Անգլիայի նկատմամբ մեկ անգամ չէ, որ Նույն կերպ է արտահայտվել ինքը՝ Իսահակյանը հայ ժողովրդի նկատմամբ ցուցաբերած նրա երկերեսանի վերաբերմունքի համար (տե՛ս, օրինակ, <Կ. Պոլսի 1896 թ. հայկական կոտորածը> փոքր, բայց ազդու անդրադարձ-գնահատականը, ԵԼԺ, հ. XII, Ե., 2021, էջ 47-48):

3 «Ուլքե՞ր ենք մենք այլևս – աղքատության, կարիքի, օտարացման մեջ ցնցոտիներ միայն, ուրիշ ոչինչ: Թշվառությունից ամեն օր, ամեն տեղ ինքնասպանությունը աճում է ռուսներին մեջ»: Կամ «Կարիքը տմարդացրել է բոլորին, անասնացրել: Այլևս ընդունակ չեն ոգևորվելու իդեալով, ո՛րը մնաց՝ մեռնի: Փողով ամեն ռուսի կարող են առնել ու ծախել» (Ավ. Իսահակյան, հ. VI, էջ 289, 290):

4 Այս նշանաբանը տարբեր աղբյուրներում բերվում է հետևյալ տարբերակով. «Հոգիդ՝ Աստծուն, սիրտդ՝ կնոջը, պարտքդ՝ հայրենիքին, պատիվդ՝ ոչ ոքի»: Այն դեռևս 1804 թ. ընդունված «Ռուս սպայի պատվի կոդեքսի» կետերից է (<https://vuc.urfu.ru/rkursantam/kodeks-chesti>, <https://smotrim.ru/audio/2324975/> և այլն): Այն հայտնի է նաև ռուս սպա, ռուսմիսոր Վալենտին Կուլչիցկու (1881-1942) «Խորհուրդներ երիտասարդ սպային» («Ռուս սպայի պատվի կոդեքս») ժողովածուից (1904), որը կազմվել է մեկ դար առաջ ընդունված կոդեքսի և այլ աղբյուրների հիման վրա ([http://elabuga.com/clubWork\\_soulAndHonor.html](http://elabuga.com/clubWork_soulAndHonor.html)): Նրա հեղինակությունը, ինչպես երևում է՝ թյուրիմացաբար, վերագրվում է նաև ռուս գեներալ Լավր Կոռնիլովին (1870-1918, <https://mospravda.ru/2020/09/11/165060/>):



փողին, պատիվդ՝ փողին»<sup>1</sup>: Ցարական, ապա Կոլչակի բանակի փայլուն սպան, ռուս սպայության լավագույն ավանդույթների կրողը ստիպված է ցավով արձանագրել, որ *ռուս սպայի պատիվ* կոչվածը արդեն միջ է դարձել. «Մեր սպաների ասպետականությունը, անձնագոհությունը այլևս պատմությանն են պատկանում: Նրանք հիմա նպարավաճառներ են, միջնորդներ, լակեյներ, զերոներ»<sup>2</sup>: Համատարած ապականությունից փրկության ելք որոնող կապուտաչյա սպայի շուրթերը նախ ինքնաբերաբար արտաբերում են ռուս բանաստեղծ Նիկիտինի «Տերը» ոտանավորի տողերը, իսկ հետո արդեն հարբած ռոտմիստրը ցանկանում է լսել «Вниз по матушке по Волге» երգը, և այստեղ արդեն իրար են խառնվում իրականն ու միջը. երգի հնչյունների ազդեցության տակ Վլադիմիր Պավլովիչի բորբոքված ուղեղում ծնվում է հայրենիքի պատկերը՝ օտար միջավայրում միակ սփոփիչ բալասանը. «Հարազատ երգի ալիքները սկսեցին հանդիսավոր ընթանալ, հետո բարձրացան, բարձրացան, հետո թափով թռան հեռո՛ւ, հեռո՛ւ և իրենց հետ թոցրին-տարան Ռոտմիստրի հոգին և խառնեցին վեհափառ Վոլգայի փրփրադեզ ալիքներին:

Տեսավ նա ռուսական գետերի նահապետ Վոլգան՝ անծայրածիր տափաստանների մեջ հոսող արեգակների պես: Լսեց զառանցական անտառների ծովածուփ մռայլ շառաչը, տեսավ գնչուների խմբերը, որ խարույկ են վառել, լսեց բուրլակների արևաբորբ երգերը, որ թավալվում էին միևե մթամթին անտառների խորքը, և լսեց թափառական գուլիարների հինավուրց հոգեցունց բիլլիսաները ոյուցազն Իյա Մուրոմեցի հաղթանակների և Իգորի զորքի ահեղ ճակատամարտի մասին...»<sup>3</sup>: Պատկերը, սակայն, այսքանով չի ավարտվում. անցյալին ու ներկային հենց այստեղ խառնվում է ապագան, որը դարձյալ ներկայացված է երկու կտրվածքով՝ իրականությունն ու միջը: Միջական ապագան ռոտմիստրին ներկայանում է հետևյալ կերպ. «...Եվ տեսավ իրեն՝ սպիտակ նժույգի վրա նստած, արծվային փառապանծ դրոշակի տակ, գլուխն անցած քաջ հեծելազորքի, որ անվեհեր, անդադար, մեծագրոհ արշավում են բուլճիկների վրա փրփրերախ, կատաղի ձիերով, որոնց վրնջուները սրտները թինդ է հանում. հետապնդում են բուլճիկներին, փոթորկային թափով հետապնդում են պարտված, փախչող բուլճիկներին արքայական Վոլգայի ափերն ի վեր,

1 Ավ. Իսահակյան, հ. VI, էջ 290:

2 Նույնը, էջ 293:

3 Նույնը, էջ 294: Անվերապահորեն ճշմարիտ է Ավիկ Իսահակյանի այն դիտարկումը, թե «այս հատվածը Ռուսաստանը պատկերող թերևս լավագույն տողերից է Իսահակյանի գեղարվեստական արձակում» (Ավիկ Իսահակյան, Ավետիք Իսահակյանը և ռուս գրականությունը, էջ 122):

ափերն ի վեր, սրարշավ, քառատրո՛ւփ, քառատրո՛ւփ, քառատրո՛ւփ»<sup>1</sup>: Այս տեսիլքը, անշուշտ, իրական հիմք ունի. այն մարմնավորում է վտարանդի ռուս սպաների նվիրական երազանքը՝ սպիտակ ձիու վրա վերադառնալ հայրենիք հաղթական երթով, և այս երազանքը նրանք հոգու խորքում փայփայել են տարիներ ու տարիներ՝ չկարողանալով համակերպվել այն մտքին, որ դա հնարավոր չէ: Միֆը, որ մարդկության արշալույսին մարդու համար նույնքան սովորական էր, որքան արևի լույսը, և միֆի ստեղծումը, որ աշխարհը ճանաչելու բնականոն գործընթաց էր, նորագույն ժամանակներում էլ շարունակում են մնալ մարդկային հոգեկերտվածքի կարևորագույն բաղադրիչներից մեկը, մասնավորապես հոգեկան հզոր ցնցումների, ուժեղ ոգևորության և հուսահատության պահերին: Նման մի պահ է ապրում նաև ռոտմիստը, որը սկսում է հակասել ինքն իրեն և կրկնել այն ցնորական մտքերը, որոնք հերքել էր սթափ ժամանակ. «Կուզմա՛, ես ստույգ տեղեկություններ ունիմ, որ բոլշևիկների անկումը մոտ է, շա՛տ մոտ... Վճռված բան է, շուտով կլինենք հայրենիքում, բոլորս միասին...Ես միշտ հավատացել եմ դրան և միշտ էլ ասել եմ մեր ժողովներում»<sup>2</sup>: Եթե պատմվածքի սկզբում սովորական օրը, իր ասելով, ռոտմիստի կյանքի ամենավատ օրն էր, ապա պատմվածքի վերջում այն դառնում է նրա կյանքի ամենալավ օրը. Կուզմայի հետ զրույցի միջոցով իր սիրտը դատարկելու և, իհարկե, վոդկայի շնորհիվ Վլադիմիր Պավլովիչի օրը լցվում է միֆով, և նա դրա համար շնորհակալություն է հայտնում Կուզմա Մաթֆեյիչին՝ հավատացնելով նրան, թե «շուտո՛ւմ, գալ տարի, կդառնանք տուն՝ սպիտակ ձիերի վրա նստած, այո՛, այո՛... Ես ուխտել եմ սպիտակ ձիով մտնել Ռուսիա, սպիտակ նժույգը նստած...»: Պատմվածքն ավարտվում է դարձյալ խորհրդանշական մի պատկերով. փողոց դուրս եկած ռոտմիստրին թվում է, թե ինքը մտնում է Կուզմա Մաթֆեյիչի մոսկովյան նոր շքեղ ռեստորան...

Իրականում ռուս վտարանդիների ապագան ավելի քան դաժան էր: Անփարատելի կարոտախտը, բոլշևիկյան իշխանության անսասանությունը, կյուբական աննախանձելի դրությունը օտար երկրներում և որպես դրա անխուսափելի հետևանք՝ հուսալքումը, բարոյագրկումն ու ազգային դիմագծերի կորուստը, ռուս տարագիրների շարքերում ոչ սակավ հանդիպող տարածայնությունները, խռոշը, խարիզմատիկ գործիչների բացակայությունը և գաղափարախոսության աղքատացումը (այս ամենը, ինչպես տեսանք, ընդհանուր առմամբ ներկայացված է պատմվածքում) վկայում էին, որ ոչ մի լավ ապագա, ոչ մի լուսավոր հանգրվան

1 Նույն տեղում:

2 Նույնը, էջ 295:

չի սպասում ռուս տարագիրներին, և այս անհերքելի իրողությունը ևս արտացոլվել է պատմվածքում: Սթափ Վլադիմիր Պավլովիչը, ներկայացնելով տարագիրների, հատկապես ռուս զինվորականների ներկա վիճակի տխուր պատկերը, հանգում է հետևյալ ցավալի եզրակացությանը. «Ես քեզ ասում եմ – 50 տարի հետո մեր փախստական ռուսներինց՝ ցրված ամեն տեղ, միայն գերեզմաններ կմնան: Ուրիշ ոչինչ: Գերեզմանաքարեր...»<sup>1</sup>: Թե որքանով է ճշմարիտ ռոտմիստը (և նրա հետ միասին՝ Իսահակյանը), բավական է այսօր այցելել Փարիզի (ավելի ճիշտ՝ գտնվում է նրանից 30 կմ հարավ) Սենտ Ժենևիև դե Բուա գերեզմանոց, որը Ռուսաստանից դուրս գտնվող ամենամեծ ռուսական գերեզմանոցն է, և որտեղ թաղված են հազարավոր ու հազարավոր ռուս վտարանդիներ՝ ազնվականներ, զինվորականներ, քաղաքական, հասարակական և մշակույթի գործիչներ, հոգևորականներ՝ հայտնի ու շարքային ռուս մարդիկ (մոտ 15 հազար անուն): Իհարկե, այս գերեզմանոցը Փարիզի և նրա շրջակայքի միակ «ռուսական հետքը» չէ. պահպանվել են բազմաթիվ նվիրական վայրեր՝ հարյուրից հազարավոր տարագիր ռուսների երբեմնի ներկայության վառ ապացույցներ, բայց իրականությունն այն է, որ դրանք առավելապես վերաբերում են ռուս վտարանդիության, հատկապես ռուս վտարանդի գրողների և արվեստագետների ֆրանսիական կյանքի «ոսկեդարին» 1917-1939 թթ. միջև ընկած ժամանակաշրջանին, և 1939 թվականին սկսված Երկրորդ աշխարհամարտի ու վերը նշված պատճառներով ռուսական երբեմնի հզոր ներկայությունը Փարիզում տարեցտարի ավելի ու ավելի է թուլացել և դարավերջին գրեթե լիովին անհետացել է<sup>2</sup>: Երբեմնի այդ կյանքի մասին, սակայն, այսօր կարելի է ամբողջական պատկերացում կազմել վտարանդիների հիշողությունների, գեղարվեստական գործերի և ուսումնասիրությունների շնորհիվ<sup>3</sup>:

1 Նույնը, էջ 293:

2 Меньгальдо Е., Русские в Париже. 1919-1939, стр. 8, 112-114, 176-177, 208. Այդ «ոսկեդարի» բարձրակետը թերևս հենց Իսահակյանի պատմվածքի գրության թվականն էր՝ 1933-ը, երբ Իվան Բունինը՝ տարագիր ռուս ամենահայտնի գրողներից մեկը, արժանացել է գրականության Նոբելյան մրցանակի, ինչը տոնվել է ողջ ռուս վտարանդիության կողմից՝ ընկալվելով որպես սեփական ծառայությունների գնահատական (Նույն գիրքը, էջ 109):

3 Ի դեպ, Իսահակյանը իր հերոսի կերպարն ամբողջացնելու նպատակով կարող էր իր պատմվածքի՝ ռուս վտարանդիների գերեզմանների հիշատակման տողերին ավելացնել նրա ապագայի վերաբերյալ հետևյալ հատվածը.

- Տխուր է, տխուր, սիրելի Կուզմա Մաթֆեյիչ...

- Այո՛, իսկապես որ... Իսկ դուք հիմա ի՞նչ եք անում, Վլադիմիր Պավլովիչ:

- Ե՛ս, ես ոչինչ էլ չեմ անում,- պատասխանեց ռոտմիստը քմծիծաղով,- և ի՞նչ կարող եմ ես անել...Երևի ստիպված կլինեմ բանվոր դառնալ, մտնել Ռենոյի գործարան, կամ էլ, ո՞վ գիտի, եթե ստացվի, կդառնամ տաքսու վարորդ, մարդկանց կտանեմ այստեղ, այնտեղ, ուր ուզեն...

Ի տարբերություն իր հերոսի, որն ընտրության հնարավորություն չուներ, Ավ. Իսահակյանն ուներ այդ հնարավորությունը և այս պատմվածքը գրելու ժամանակ այն արդեն արված էր: 1920-ական թթ. կեսերին նա հաստատ որոշել էր վերադառնալ հայրենիք՝ Խորհրդային Հայաստան, որտեղ ապրեց 1926-1930 թթ. և վերջնականապես հաստատվեց 1936 թ.: Իր ճակատագրով իր ռուս հերոսի հետ ունեցած որոշ ընդհանրություններով հանդերձ Իսահակյանը նրանից տարբերվում է ևս մի կարևոր հատկանիշով, որը բխում է վերը ներկայացված տարբերությունից. Իսահակյանը, ի տարբերություն իր հերոսի, որն իր ողբերգական վիճակից փրկություն էր որոնում իր և իր բախտակիցների ստեղծած միջերի մեջ, միջ դարձրեց իր փարիզյան կյանքը և փոխարենը գտավ նոր իրականություն, որը թեև, մեղմ ասած, ո'չ ժողովրդավարական էր, ո'չ ազատ ստեղծագործելու և ո'չ էլ ճոխ կյանքով ապրելու հնարավորություն էր տալիս նրան, այնուամենայնիվ Հայրենիքում ապրելու, իր ժողովրդի հետ լինելու, նրա ճակատագիրը կիսելու երջանկությունն էր տալիս, իսկ դա երևի ամենամեծ երջանկությունն է մարդու կյանքում:

Իր անողորմ ճշմարտացիությամբ, ռուս մարդու, ռուս վտարանդիի հոգու խորքը թափանցելու խորությամբ և գեղարվեստական արժանիքներով Իսահակյանի «Ռոտմիստր Վ. Պավլովիչի երազը» պատմվածքը հայ արձակի լավագույն նմուշներից է և միաժամանակ այդ թեմայով գրված լավագույն ստեղծագործություններից մեկն ընդհանրապես: Վաղուց ժամանակն է, որ այն թարգմանվի ռուսերեն և այլ լեզուներով ու ներկայացվի օտարալեզու ընթերցողին՝ իր արժանի տեղը գրավելու ռուս վտարանդիության թեմայով գրված հայտնի ստեղծագործությունների շարքում:

**ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՄԵՆ ԼԵՎՈՆԻ** - բանասիրական գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ հայ նոր և նորագույն գրականություն: Մասնակցել է հայ դասականների երկերի ժողովածուների տասը հատորների կազմմանը, հեղինակ է մոտ տասը գեկուցումների և գիտական հոդվածների: Էլ. փոստ՝ [manukyan-armen@mail.ru](mailto:manukyan-armen@mail.ru),

- Դո՞ւք, Վլադիմիր Պավլովիչ, բանվոր, տաքսու վարորդ,- անկեղծորեն գարմացավ Կուզմա Մաթֆեյիչը,- այդպես ո'նց կլինի...

- Իսկ ինչո՞ւ չի լինի, սիրելի Կուզմա, իմ բազմաթիվ զինակիցներին մի հոգի էլ կավելանա... Ես նրանցից ինչո՞վ եմ ավել...» (այս առումով տե՛ս Ե. Մենեգալդիյի՝ վերը նշված գիրքը, էջ 149-157 և 181-207):

1 Ավիկ Իսահակյան, Ավետիք Իսահակյանը և ռուս գրականությունը, էջ 123:

2 Դեռ 1984 թ. պատմվածքը ռուսերեն թարգմանելու անհրաժեշտությունը նշել է Ավիկ Իսահակյանը (Ավետիք Իսահակյանը և ռուս գրականությունը, էջ 122): Անցել են երկար տարիներ, բայց սայլն այդպես էլ տեղից չի շարժվել:

**MANUKYAN ARMEN LEVON. MYTH AND REALITY IN AVETIK ISAHAKYAN'S STORY "THE DREAM OF CAPTAIN V. PAVLOVICH"**. In the original and colorful gallery of heroes, created by the great Armenian poet and prose writer Avetik Isahakyan, a Russian emigrant officer, the main hero of the story "The Dream of Captain V. Pavlovich", occupies a special place.

The former captain of the tsarist, and then the Kolchak army, Vladimir Pavlovich visits the Paris restaurant of his old acquaintance, the former Moscow restaurateur Kuzma Matfeich, to pour out his longing. The action develops through dialogue, and Isahakyan skillfully reveals step by step the folds of the captain's soul, illuminates the darkest corners of this "mysterious Russian soul", thereby revealing the tragedy of Russian emigrants. In Vladimir Pavlovich's long monologues intertwine the past, present and future, myth and reality, and this two play a significant role in all three periods of time, transform into each other or are compared to each other, thereby helping the author to complete what he said.

With its cruel truthfulness, the depth of penetration into the soul of a Russian person, a Russian emigrant and artistic qualities, Isahakyan's story "The Dream of Captain V. Pavlovich" is one of the best examples of Armenian prose and at the same time one of the best works written on this topic in general. It is high time to translate it into Russian and other languages and present it to a foreign reader so that it takes its rightful place among the well-known works on the theme of Russian emigrants.

**Keywords** – Avetik Isahakyan, Paris, Russian emigrants, captain, nostalgia, past, present and future, myth and reality, "Russian trace" of Paris

**МАНУКЯН АРМЕН ЛЕВОНОВИЧ. МИФ И РЕАЛЬНОСТЬ В РАССКАЗЕ АВЕТИКА ИСААКЯНА "СОН РОТМИСТРА В. ПАВЛОВИЧА"** . В своеобразной и красочной галерее героев, созданной великим армянским поэтом и прозаиком Аветиком Исаакяном, свое особое место занимает русский офицер-эмигрант – главный герой рассказа "Сон ротмистра В. Павловича".

Бывший ротмистр царской, а потом колчаковской армии Владимир Павлович посещает парижский ресторан своего давнего знакомого, бывшего московского ресторатора Кузьмы Матфеича, чтобы излить свою тоску. Действие развивается через их диалог, и Исаакян искусно шаг за шагом раскрывает складки души ротмистра, освещает самые темные уголки этой «загадочной русской души», раскрывая тем самым трагедию русских эмигрантов. В длинных монологах Владимира Павловича переплетаются прошлое, настоящее и будущее, миф и реальность, и эти двое играют значительную роль во всех трех периодах времени, трансформируются друг в друга или сопоставляются друг к другу, тем самым помогая автору дополнить сказанное им.

Своей жестокой правдивостью, глубиной проникновения в душу русского человека, русского эмигранта и художественными качествами рассказ Исаакяна “Сон ротмистра В. Павловича” – один из лучших образцов армянской прозы и в то же время одно из лучших произведений, написанных на эту тему вообще. Давно пора его перевести на русский и другие языки и представить иноязычному читателю, чтобы он занял свое достойное место среди известных произведений на тему русских эмигрантов.

**Ключевые слова** – Аветик Исаакян, Париж, русские эмигранты, ротмистр, ностальгия, прошлое, настоящее и будущее, миф и реальность, «русский след» Парижа

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Իսահակյան Ավետիք, Երկերի լիակատար ժողովածու 14 հատորով, հ. VI, Երևան, 2019:
2. Իսահակյան Ավետիք, Երկերի լիակատար ժողովածու 14 հատորով, հ. XII, Երևան, 2021:
3. Իսահակյան Ավիկ, Ավետիք Իսահակյանը և ռուս գրականությունը, Երևան, 1984:
4. Իսահակյան Ավիկ, Ավետիք Իսահակյանի արձակը, Երևան, 1975:
5. Իսահակյան Վիգեն, Հայրս, Երևան, 2000:
6. Берберова Нина, Курсив мой. Москва, 1999.
7. Литературные связи, т. 2: Русско-армянские литературные связи: исследования и материалы. Издание ЕГУ, Ереван, 1977.
8. Менегальдо Елена, Русские в Париже. 1919-1939. Москва, 2001.
9. Сотников С. А., “Русская военная эмиграция во Франции 1920-1930 гг.: проблемы адаптации”, Вестник ассоциации вузов туризма и сервиса, 2007, N 2, стр. 120-126.
10. Яновский Василий, Поля Елисейские. Книга памяти. Санкт Петербург, 1993.
11. Էլեկտրոնային աղբյուրներ՝  
<https://vuc.urfu.ru/ru/kursantam/kodeks-chesti>  
<https://smotrim.ru/audio/2324975/>  
[http://elabuga.com/clubWork/\\_soulAndHonor.html](http://elabuga.com/clubWork/_soulAndHonor.html)  
<https://mospravda.ru/2020/09/11/165060/>:  
DOI: 10.54503/1829-0116-2022.1-59